

Գ. ԱՎԱՆՂԱԶՈՐԻՅՑՆԵՐ ԵՎ ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(171). ԱՍՏՎԱԾ ՈՒՄ ՀՊԳԻՆ Է ԱՈՆՈՒՄ

Հա՛, առաջներըմը, պատմութիւնը ասըմ ա, որ էսպէս ա ըլել, մարթիք որ ծնվել են, պետկ ա անպայման կըցել ին, էնքան ապրել ին, որ օխտանասուն, ութանասուն, ութանասնը-հինգ, հարուր տըրեկան տառել, նոր մահա-ցել: Պաւստը վախտը, ջահել վախտը մահա-նալը կարիք չի ըլել, աստոծը տէն ա ըստեղ-ծած ըլել, հիմի մի հատ, մի ժամանակ մի հատ սուրհանդակ են ունացել, տըրան ասել են, որ.- Բյնա՛ ախի՛նչ մարթի հոքին առ, պի՛:

Էտ մարթն էլ, թե իմաստուն ա ըլել, թե ինչ-պէս ա ըլել, թե ո՛նց ա ըլել, պառա՛վ մարթ էլի, որ քյնա՛ տըրա՛ հոքին առնի: Էտ պառա՛վ մար-թը էտեղ մի խիտրութիւն ա արել, էտ շունը թրաշվել ա՛ մաքո՛ւր կլլիւխ, էրես, պառնը թրաշվել քյոցցել պաւստընեթի հետ խաղ անըմ ա, չիլզի հետ մաքցել ե՛լի¹, չիլզի տալիս ա ը-լել հետերնուն: Բյնըմ ա, տանջըմ ա, տանջըմ ա, քյնա՛ցած մարթ ա, տանջըմ ա, տանջըմ ա, կարըմ չի ճընանչի, քյնի, որ էտ մարթը որն ա, որ տըրա՛ հոքին առնի՝ տանի: Էտ ա քյնըմ, թե ասըմ ա.- Կըրացի ոչ քյնըմ:

Թե.- Խի՞:

Թե ասըմ ա.- Դե խառնված սիե խաղ են ա-նըմ, կարըմ չեն կըլխի ընգնեն:

Էտ ա միտ էլ ա ետ տառնըմ քյնըմ, էլ չի կարըմ: Միտ էլ որ ետ ա տառնըմ, ասըմ են.- Բյնա՛, լա՛վ, ուզըմ ա մեծ ըլի, ուզըմ ա պաւստը ըլի էս սիաթիս մնի հոքին առ, հա՛ արի:

Էտ ա քյնըմ ա ու յաբախտի հա՛ մըիլ մի պաւստըն առնըմ: Էտ օրեց միչև սօր էլ էտ կարթը հա՛ մընըմ ա՛, տիեմց մեծ, պաւստը, էլ հա՛շվի չեն առնըմ: Տըիեմց էլ հա՛ առնըմ են տանըմ: Էրեխեն էլ են տանըմ էլի:

2(172). ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐՀԱՆԱԲԸ

Քրիստոսը էտ ծառի միջին, հա՛յ, մեր տըռնը կա՞, հա՛ տըրա՛ միջին պահվել ա ա-վազակներիցն էլի: Որ տրա՛ թևերը մեխել են, էրկու ծեռը միե տըրել են տըխտակի վրա ու մեխը տվել կպցրել ընդիմա՛ն՝ էրկու ծեռը, բայց թե ո՛նց ա եղել էտ էրկու ծեռը ըլետ հանել ա էտ մեխի միջին, փախել ա քյնա՛ցել էտ ծառի մեջը մտել, ինչքան ման են եկել, կըլխի չեն ը-լել: Տա էն ծառը ուրեմը Քրիստոսը օխնել ա, ասել ա.- Ամառ-ծմեռ, կյա՛րունք-աշունք կա-նաչ կենաս՞:

3(173). ԱՍՏՎԱԾՄԱԿԵՏ ՂԱԶԱՐԸ

Ղազարը աստվածապաշտ ա ըլել, ասել են.- Ղազարը ապրուստ ունի, կարողութիւն ու-նի, ընդիւր ա աստվածը պաշտըմ:

Ղազարի ապրուստը, կարողութիւնը, ժա-ռանգութիւնը ոչնչացել ա, Ղազարն էլի աստ-ված ա պաշտել: Պիրել են Ղազարի ջանը որթընցրել: Որթը որ վրիցը վեր ա ընգել, տը-րել ա իրան վրա՛՝ որ աստվածը քեզ ըստեղծել ա, որ տա՛ւ ինձ ուտես, ի՛ւր ես վեր ընգնըմ, օխնվա՛ծ:

Էտ Տերինքը պիրել ա, նորից ասել ա.- Ղա-զար, ի՛նչ ես ուզըմ, ուզըմ ես քու ապրո՛ւստը, թե՞ քու ժառանգութիւնը:

Թե.- Ի՞նչ ժառանգութիւն են ուզըմ:

Պիրել ա աստվածը նորից տրա՛ ինչ որ ու-նի հետ տըլվել, առա՛վտը տեհել են Ղազարի ծովսը ծով ա ըլըմ: Եկել են տեհել Ղազարը

¹ Բանասացը դիմում է բանահավաքին՝ հավաստիանալու համար, որ քան գիտի «չիլկի» խաղը (ծանոթ. բանահավաքի):

² Բանասացը ցույց է տալիս իրենց բակի սլացիկ մշտադալար ծառը:

³ Ո՛վ է պատմել հարցին բանասացը պատասխանեց. «Մեր միմեծ պապերը, մեր միմեծ պապե-րը»:

տառնել և նույն Ղազարը՝ իրան ժառանգովը, իրան ապրուստովը:

4(174). ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ ՋՐՇԵՂԵՂԻ ՄԱՍԻՆ

Մեկ էլ մեկին աստվածն ասել և, որ.- Մեծ հարստ իհետոտ կխոսա, տու ևն ժամանակ քու քոչը կքաշես կհեռանա: Կեսրարը քյմա-ցել և չուք վարի, հարսն էլ հաց և թխըմ, թորոնը ճուրը լցվել և, քանի սըրփել և կըռցրել, ճուրը լըցվել և, լըցվել և: Կեսրարը եկել և, որ.- Խի՞ չես հաց պիրըմ:

Սսել և.- Դայրիկ,- ասել և.- թորոնը ճուրը լըցվում և, չեմ կարոմ թխեմ: Ետեղից էտ մարթն իրան մատը կծել և, իրան քոչը տուս տարել, նորից որ ճըրհեղեղ և ըլել: Շուկը մի ցորեն և քըթել, ոռնացել, ցորենը տվել և շա-նը, կյումեշն էլ ճըրի իրեսին երգա՛ր ծեն հա-նել, տըռլընգացել, կյումշին էլ տրա մհար հետ և տվել:

5(175). ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԼՍՏ ՕՅՈՐԻ ՄԱՍԻՆ

Կիրանցի վանքը շինել և աշկերտը, Տեխծ-նուտին շինել և ուստեն: Ուստինը ավելի և գեղեցիկ, բայց աշկերտը որ շատ տանջել և, լա՛վ շինել և: Ուստեն քյմացել և, որ նայել՝ փո-րը վե չի կալել, ինքը վերը, մնացել և խաչը, որ տընիլ դի վե կյալ, ասել և.- Ուստա, լա՛վ եմ պատել:

Թե.- Լա՛վ ես պատել, բայց կըրանց ես ա-րել:

Տա՛ էլ նեղանալեն՝ կըլխիցը թռել և, էկել մի ծորըմ, չաքուչը կյուտըմը, չաքուչը ճըլա-տել և ոտը, ընդել անըմը տըրել են *ճըլատ ծոր*:

6(176). ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՆՑԻ ՄԱՍԻՆ - 1

Կիրանցը պատելու ժամանակ աշկերտն և սկսըմ Կիրանցը պատիլը: Էտ և էտ պատիլու ժամանակ կաթ են պիրըմ կաթով կիրը շղա-

ղըմ, պիրըմ կիրը շղաղըմ են ու պատը սկսըմ են: Աշկերտը պատըմ և, ուստեն թամաշա ա-նըմ և: Վերջանալու ժամանակ՝ էտ Կիրանցը ավարտելու ժամանակ, կանչըմ և ուստեն աշկերտին, ասըմ և.- Մի պատմի, թե ո՞նց ես պատել:

Ասըմ և.- Ուստա ջան, լա՛վ եմ պատել, միայն ես քեզ ուզըմ եմ, որ ասես, որ ո՞նց և, ի՞նչ կատեգորիա ես տալի իմ ուստութենին:

Թե ասըմ և.- Տղա ջան, լա՛վ ես պատել, բայց թե մի քիչ կիրանց ես արել, կիրանց և:

Ըտեղից աշկերտը՝ էտ իքը, վախըմ և էլի, էտ իրա մհար պարծանք չի ըլըմ, ասըմ և.- Ու-րեմը ուստեն չհավանց:

Ըտեղից ինքը թռըմ և, էտ աշկերտը, մա-հանըմ, էտ պատողը, էտ կիրանցը պատողը, և էտ անունը կաչըմ և *Կիրանց*:

Ըտեղ էլ ճաշ եփած են ըլըմ բանվորների հմար, ուստենու հմար, օցը կյալիս և ընգըմ ճաշի մեջը՝ պղնձի, մսի ճաշի մեջը: Ըտեղից ակռավը պտիտ և կալի պղնձի կլխովը կըլխի չեն ըլըմ: Ակռավը իրան տալիս և կերակրի մեջը, ստակըմ ակռավը: Պղինձը թափըմ են, տենըմ են, որ օցը միջին ստակած: Պերըմ են Կիրանցից մի երկուսարի, իրեքսարի մետ-րը հեռավորությամբ թաղըմ, տնըմ անունը Ակ-ռավի մանտոռ, Ակռավի մանտոռ: Իսկ էտ աշ-կերտը, որ Կիրանցը պատել և, ըտեղ էլ հենց Կիրանցի տակին թաղված և, իրան աշկերտը:

7(177). ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՆՑԻ ՄԱՍԻՆ - 2

Գեղեցիկ, ուրեմը, հուշարծաններ են, մեծ վանքեր են էլի, հա՛ մեծ վանքեր են: Էտ վա-նքերից ուրեմը Ղեղծնուտը իրան վարպետն և պատիլիս եղել, իսկ Կիրանցը իրան աշագե-րը, էտ վարպետի աշագերդն և պատիլիս ե-ղել: Ուրեմը, որ վերջացըմ և էտ աշագերդը, դրա վարպետը, որ գալիս և նայի, նայելու ժամանակ տա՛ որպեսզի տեսնի հավանըմ և, թե չէ: Էտ աշագերտը վերջացրած գմբեթի կըլ-խին և ըլըմ, ամենավերջըմ ասըմ և.- Ուս-տա՛,- ասըմ և,- ո՞նց և, լա՛վ եմ պատել, հա-վան ե՛ս:

Ասըմ ա.- Շատ լավ ես պատել,- ասըմ ա,- բայց,- ասըմ ա,- կըրանց ես արել¹:

Ուրեմը տո՛ւ պակասությունն ա համարըմ, և աշագեղողը ընդեղից իրան քցըմ ա մահանըմ, թե ինչու իմ պատին նա ըտենց պան կասի: Եվ էտպես էլ էտ հուշարծանի անուըն կպել ա *Կիրանց*: Հին պատմությունը էտպես ա:

8(178). ԱԳՈՒԿԻ ՄԱՍՈՒՌ

Էտ Կիրանցի մոտ մի փոքրիկ բան կա՝ ըտենց պատած էլի, շենք ա նհենց ամբողջ թաղը վրա պիրած էլի քարերով: Տո՛ւ էլ Ակռավի մանդուտ եմ ասըմ: Հետաքրքրվըմ ենք, ասըմ ենք՝ ընչի՞նք են նրան Ակռավի մանդուտ ասըմ: Ուրեմը, էտպես ա պատմությունը.

Ընդեղ էտ Կիրանցի վանքը պատիլու ժամանակ ճա՛շ եփելիս են ըլնըմ բանվորների համար, որպեսզի բանվորները ուրեմն պան անեն էլի, ճա՛շ ուտեն: Մի ակռավ կռվիս ա պտտվըմ ա, պտտվըմ ա պղնձի վրա, ասըմ են.- Սա ի՞նչ ա պատահել էս ակռավին, դես-դեն:

Ակռավը իրան քցըմ ա պղնձի մեջը, որ քցըմ ա պղնձի մեջը, էտ ա ասըմ են.- Հրամ-վեց:

Պիրըմ են ճա՛շը շուռ տալի, պղնձից թափըմ են, տեսըմ են՝ մի հատ օգ, ուրեմը, պղնձի միջին պան արել ա: Տըրանով ենթադրըմ են, որ էտ ակռավը օցի համար ա իրան ընդեղ քցել՝ ճա՛շի մեջը, և էտ ամբողջ բանվորների կյանքը փրկել ա էտ ակռավը: Էտ ակռավի համար առանձնապես պիրըմ են տեղ շինըմ, հիմա էլ, ճիշտ ա, քանդված ա, բայց տեղը կա էլի, տեղը մա՛շուր ա՝ *Ագռավի մանդուտ* են ասըմ: Էտ էլ էտպիսի պատմությունն ա ըլել:

9(179). ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՍՆԱՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Մի ախճիկ, տղա են ըլել: Տղին ախճիկն ուզիլիս չի ըլել, գոռով (հին օրենքն էլի), որ գոռով հեղը-մեղը տվել են: Նշան են տղրել պրծել, եկել ա ըխճըկանը հրսանիք անիլի վախտը էտ ախճիկը ոտը դեմ ա տվել, ժամը քյնալիս չի ըլել, որ ժամը քյնալիս չի ըլել: Տե-րինքը եկել ա էտ ըխճկանը ասել ա թե.- Ձուռ-նաչին՝ գուռնեն պեռնըմը չորանա տեղը ու տեղը, հերն էլ չորանա, չիմ , հարսի մակար, իրանք:

Հիմ ուրաք հետ տեղն ու տեղը քար են տա՛ռել: Տա՛ռել են քար, ըտուր համար *Հարսնա-քար* են ասըմ:

Հա՛, էս թուպիս հրե քյնըմ են է՛, գուռնեն ոնց որ փչիլիս ըլի էլի, հաստա՛տ, էն դիւլը կըռնըմ, վերջը մակար-պան չիմ տեղն ու տեղը չորացել, սիս ոնց որ մարթիք ըլեն կաղ-նած: Հա՛ Հարսնաքարը՞ տրա միար են ասըմ:

10(180). ԱՈՒՔԵԼՈՑ ՎԱՆԹԻ ՄԱՍԻՆ

Էտ Առաքելոց վանքը մեր գյուղից մոտավորապես երկու կիլոմետր հեռավորության վրա ա գտնվըմ: Հին ժամանակըմ նա պաշտպանության տեղ է եղել, էտ վանքը մեծ վանք ա, և երկու մետրանոց հաստ պատերով քաշած պարիսպներ ա էլի, ընդեղ պաշտպանության տեղ ա եղել: Լեզգիները, թաթարները, բանը այ էղ հին ժամանակ, երբ որ Հայաստանի վրա արշավելիս են եղել կռվելու էլի, հայերը ըտեղ հավաքված պաշտպանվելիս են եղել:

¹ «Իբր թե՛ կիր շատ ես անել», - բացատրում է բանասացը:

² Հարսնաքարը գտնվում է Դիտավան գյուղի սարի Սուլբանի ուրթ կոչվող տարածքին հարակից անտառի մեջ: Այն բնական ժայռերի զանգված է, որն առանձնացած է լեռներից և վեր է խոյանում անտառի մեջ և իրոք մնամ է քարացած հարսան-քավորների խմբի (ծանր. բանահավաքի):

11(181). ՕՂՈՉԱՔԱՐ

Էտ Օղուզը ընդահա մարթ ա ըլել էի: Էտ Օղուզը մեծ քար ա, չորս տաշովի մեծ քար ա՝ պոցորը: Պիրել ա ջընջըլով կապել, սիե կըտրած էր էտ քարից, խազ արել ջընջըլով կապել, շըլալել, պիրել Փոթի կյումեր ենք ա-սըմ, Փոթի կյումերովը, որ սարի վրա քյընը ենք էլի, հա՛, հրե ընդեղ թաղած, իրան միար սահ-ման արել, անընդ կըպել ա *Օղըզաքար*, Օղը-զաքարն ա, Օղըզաքարն ա:

Իրան միար ըտեղ հողի սահման ա կտրել, սահման ա արել: Թե հայ ա ըլել, ինչ ա ըլել են գիղըմ չեն:

12(182). ԱՎՍՆԴՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԴՍՅԱՆ ՏՈՐՄԻ ՍԱՄԻՆ

Շատ ժամանակ առաջ մեր գյուղը էղել ա փոքրիկ գյուղ, և միջի ժողովուրթը՝ հետամ-նաց մարթիք: Ժամանակով պարսիկ շահը իր ամբողջ զորքով անցնելիս ա եղել մեր շրջա-նով, եկել ա մեր խաշթառակ գյուղը: Ընդեղ ինչ-որ մի հանդամասում մի հարմար ախպուր ենք ունացել՝ մի մեծ ծառի տակ՝ կաղնի ծա-ռի տակ: Նա իրան զորքով կաղնել է ըտեղ հանգստանալու, և մեր գյուղում մի ախկատ մարթ, որ բոլորովին ախկատ ընտանիքի տեր ա եղել և մինուճար տղա ա ունացել, էտ տղան վերցրել ա ու տարել էտ շահին փռշ-քաշ, տարել ա ասել.- Շահ սաղ օլսըմ¹, իմ ե-րեխան ես փեշքեշ եմ տալիս քեզ, ուր որ էլ գնաս, հետդ տալ:

Շահը նայել ա, նայել մարթուն, տեսել ա, որ ախկատ մարթ ա և առանձնապես տրանի երեխան վերցնելուց ոչ մի օքուտ չկա, և շահը ինքը ասել ա.- Տար, երեխան էլ քեզ.- և նա տվել ա նրան աղության կոչում և նրան տվել ա աղալարների էսպես ասած նշան, և դրանք հենց սկզբից էլ տարցել են աղա:

Սիառժամանակ տըրանք գյուղընը աղուք-յուն են արել, վերչապես հողեր են զավթել, էս կողմը, էն կողմը, ազգականով, իրանց պապե-րով-տատերով: Սի խոսկով ժամանակի ըն-թացկուն Իջևանի շրջանի Կոթի գյուղ կա, էտ գյուղըմ Սարիատիկովներ կան, էտ Սարիա-տիկովները լսել են, որ խաշթառակի գյուղի Սարիատյան ազգանունով մի ազգություն թավղա ունի՝ աղության ինչ-որ կոչում: Նրանք եկել են մտերմացել տըրանց հետ, տեսել են, որ Պարսկաստանի շահից տըրված մի, էսպես ասած, մի կոչում է՝ աղության կոչում, որ տըրանք աղության անուն կարող են կրեն ի-րանց վրա: Տըրանք, որպես, գյուղի մարթիք են էղել հետամնաց, ամեն մի բան լսելով՝ սրանից-նրանից, տըրանք կարողացել են հա-մոզեն էտ կոչումի տերերին, որ.

- Շեր կոչումը իսկական չի, տուք տվեք մենք տանենք Թիֆլիզում նորից արտագրել տանք, հաստատիլ տանք ու պիրենք տանք ծեզ:

Վերչապես խափել են տըրանք, էտ կոչու-մը, պաշտոնական, վեր կալել տարել, տարել իրանց անունով շուռ տվել, Սարիատյանները կոչել են Սարիատիկովներ և իրանք տարցել աղալարներ, իրենք տարցել՝:

Էսօր էլ դեռ մարթն ըստապըմ ա, որ ի-րենց կոչումը պըտի պիրի վերադարձնի:

13(183). ՇԱԻՐ ԱՐՔՅՈՒՐ

Մեր հանդամասում մի ախպուր ա եղել, ա-նանուն ախպուր: Երբ շահը եկել է էտեղ հանգստանալու, իրան վրանները խփել է և մի քանի օր հանգստացել: Դենց էտ, էտ անունը, էտ ախպուրը անուն ա ըստացել՝ Շահի պատի տակի ախպուր, մեծ կաղնեու տակ, դարավոր կաղնեու տակի ախպուր:

¹ Շահ սաղ օլսըմ - շահն ապրած լինի (ծանրթ. բանահավաքի):